ՆԱԽԱԳԻԾ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

---- հոկտեմբերի 2009 թ. N ---Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ՄԱՍՆԱԿԻ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով և Երևանի քաղաքապետարանի «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական առողջացման նպատակով.

Երևանի ավագանին *որոշում է.*

Երևանի քաղաքապետարանի «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությանը մասնակի ազատել 2008 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթից հաշվարկված և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի վճարումից՝ 30.0 մլն.դրամի չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնության հեղինակ՝ Երևանի քաղաքապետ:

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Երևանի քաղաքապետարանի «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությանը 2008 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի վճարումից մասնակի ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

Երևանի քաղաքապետի 27.05.2009թ N5327-Ա որոշման համաձայն «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2008 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած 134521.0 հազ. դրամի զուտ շահույթից եռամսյա ժամկետում Երևանի բյուջե պետք է վճարի 34332.2 հազ. դրամի շահութաբաժին:

Ընկերությունը 2008թ. սեփականության իրավունքով պատկանող 27 թեթև մարդատար ավտոմեքենաներով սպասարկել է Երևանի քաղաքապետարանի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումներին և այդ մեքենաների ծախսը կազմել է 162018.0 հազ. դրամ, որի դիմաց համաձայն Երևանի քաղաքապետարանի հետ կնքված ավտոմեքենաների վարձակալության և սպասարկման գծով պայմանագրի հատկացվել է 18000.0 հազ. դրամ (այդ թվում 3000.0 հազ դրամ ԱԱՀ) կամ 144018.0 հազ. դրամով պակաս: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան 144018.0 հազ. դրամ գումարը, որպես գործունեության հետ չառնչվող ծախսեր, Ընկերության կողմից ձևակերպվել են շահութաբաժնի հաշվարկումից հետո Ընկերության տրամադրության տակ մնացող զուտ շահույթի հաշվին, որի արդյունքում էլ ստացվել է գերշահույթ:

2009թ 7 ամսվա ընթացքում թեթև մարդատար ավտոմեքենաների սպասարկման գծով 71251.0 հազ. դրամ ծախսի դիմաց Ընկերությանը Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացվել է 11900.0 հազ. դրամ կամ 59351.0 հազ. դրամով պակաս և Ընկերության կողմից ներկայացված տեղեկանքին համապատասխան 2009թ 8 ամսվա ընթացքում Ընկերությունն աշխատում է 30650.4 հազ. դրամ վնասով:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև Ընկերության ֆինանսական առողջացման նպատակով առաջարկվում է Ընկերությանը 2009թ. շահութաբաժնի վճարումից ազատել 30000.0 հազ. դրամի չափով:

Երևանի քաղաքապետ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ